

## **ՀՀ ֆինանսների նախարարություն**

### **Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 41/4**

**20 հոկտեմբերի 2015 թ.**

Քննարկվեց «Վահագն Բարիք» ՍՊԸ-ի ՀՀ Նախագահին հասցեագրված 09.09.2015 թ-ի դիմումով բերված գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 31.08.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 293591/05 որոշման դեմ:

#### **«Վահագն Բարիք» ՍՊԸ-ի գանգատում բերված փաստարկները.**

«Վահագն Բարիք» ՍՊԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարության Արտաշատի ՏՀՏ-ից ստացել է ծանուցագիր, որ սահմանված ժամկետում չի ներկայացրել հաշվետվություն 2015 թվականի ԱԱՀ-ի առաջին եռամսյակի համար և 31 օգոստոսի 2015 թվականի համար նշանակվել է բացատրական լսում:

«Վահագն Բարիք» ՍՊԸ-ն 25 օգոստոսի 2015 թվականի բացատրական նամակով դիմել է Արտաշատի ՏՀՏ-ի իրավաբանական բաժին, սակայն հաշվի չառնելով բացատրությունը 31 օգոստոսի 2015 թվականին նշանակվել է վարչական իրավախախտման վերաբերյալ տուգանք:

ՀՀ ֆինանսների նախարարության իրավաբանական վարչության թիվ 293591/05 որոշումն ընկերության տնօրենի հանդեպ տուգանք նշանակելու մասին արդարացի չէ, հետևապես գանգատաբերը խնդրում է քննարկել ընկերության ներկայացրած բացատրությունը, հատկապես, որ ընկերությունն արդեն երկու տարի չի գործում, երբեք ԱԱՀ վճարող չի հանդիսացել, լուծարման շեմին է, տնօրենն աշխատավարձ չի ստանում և ներկայացնում է գրոյական հաշվետվություն:

Ելնելով վերոգրյալից՝ գանգատաբերը խնդրում է վերանայել ընկերության տնօրենի հանդեպ կիրառված տուգանքը:

#### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննելով 25.08.2015 թ-ի 2 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը պարզել է, որ «Վահագն Բարիք» ՍՊԸ-ի տնօրեն Արփա Դավթյանը սահմանված ժամկետում չի ներկայացրել 2015 թ-ի 1-ին եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկը, որի համար նախատեսված է պատասխանատվություն: Նկատի ունենալով, որ արարքը նախատեսված է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասով, ուստի ղեկավարվելով նույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244.2-րդ, 281-րդ հոդվածներով և 282-րդ հոդվածի 1-ին կետով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 31.08.2015 թ-ին ընդունվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ

293591/05 որոշումը (այսուհետ նաև Որոշում), որով Արփա Դավթայանի նկատմամբ նշանակվել վարչական տույժ՝ գումարով 20.000 դրամի չափով:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ «Վահագն Բարիք» ՍՊԸ (այսուհետ նաև ընկերություն) կողմից 2015 թ-ի առաջին եռամսյակի համար ներկայացվել է շրջանառության հարկի գրոյական հաշվարկ, սակայն հետագայում պարզելով, որ մինչև 20.02.2015 թ-ը շրջանառության հարկ վճարող համարվելու համար հայտ չներկայացնելու հետևանքով չի կարող համարվել շրջանառության հարկ վճարող, ընկերության կողմից 20.07.2015 թ-ին ներկայացվել է ԱԱՀ-ի հաշվարկ:

Հարկ է նշել, որ «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Հայաստանի Հանրապետությունում շրջանառության հարկ վճարող կարող են համարվել սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանները բավարարող Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ համարվող առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները, այդ թվում՝ նոր ստեղծված (պետական գրանցում ստացած կամ հաշվառված) հարկ վճարողները (այսուհետ՝ անձինք), բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում նշված դեպքերի՝

1) յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից մինչև այդ տարվա ավարտը (բացառությամբ օրենքով նախատեսված՝ տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի), եթե մինչև այդ տարվա փետրվարի 20-ը իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացրել վերադաս հարկային մարմնի ղեկավարի հաստատած ձևով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն.»::

Իր հերթին, «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 21.06.2014 թ-ի ՀՕ-128-Ն օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն. «Սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետով Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող 1-ին կետով նախատեսված՝ վերադաս հարկային մարմնի ղեկավարի հաստատած ձևով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու վերջնաժամկետը կիրառվում է միայն այն դեպքում, եթե հարկային մարմինը հարկ վճարողին ծանուցել է սույն օրենքով նման վերջնաժամկետ սահմանված լինելու մասին: Եթե հարկային մարմինը սույն մասով նախատեսված ծանուցումը հարկ վճարողին ուղարկում է սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետով սահմանված ժամկետներից հետո, ապա որպես շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարության ներկայացման վերջնաժամկետ սահմանվում է հարկ վճարողին ծանուցումը տրամադրելու օրվան հաջորդող 7-րդ աշխատանքային օրը»:

Վերոգրյալից, ըստ էության, հետևում է, որ վերադաս հարկային մարմնի ղեկավարի հաստատած ձևով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու վերջնաժամկետ սահմանված լինելու մասին հարկային մարմինը, տվյալ դեպքում Արտաշատի ՏՀՏ-ն, պետք է մինչև 2015 թ-ի փետրվարի 20-ը ծանուցեր հարկ վճարողին: Սակայն, համապատասխան ծանուցագիրն ընկերությանը ուղարկվել է միայն 19.08.2015 թ-ին, որն ընկերության կողմից ստացվել է 22.08.2015 թ-ին: Հետևաբար, շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարության ներկայացման վերջնաժամկետն ընկերության համար սահմանվել է մինչև 01.09.2015 թ-ը: Այսինքն, մինչև 01.09.2015 թ-ն ընկած ժամանակահատվածում ընկերությունն իրավունք է ունեցել ներկայացնել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն և

համարվել շրջանառության հարկ վճարող, հետևապես նաև, չի կրել ԱԱՀ-ի հաշվարկ ներկայացնելու պարտականություն:

Ելնելով վերոգրյալ փաստական հանգամանքներից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ ընկերության կողմից 01.01.2015 թ-ից մինչև մինչև 01.09.2015 թ-ն ընկած ժամանակահատվածում ԱԱՀ-ի հաշվարկ ներկայացնելու պարտականություն չկրելու պայմաններում 2015 թ-ի առաջին եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկը սահմանված ժամկետում չներկայացնելու համար վարչական պատասխանատվության չէր կարող ենթարկվել:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո թ ո շ ու մ է՝**

Բեկանել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 31.08.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 293591/05 որոշումը, իսկ գործը՝ կարճել:

**Հանձնաժողովի նախագահ՝**



**ՎԱԽՐՈՒՄՅԱՆ**